**«Հայաստանի Համայնքների Միություն»**
**Հասարակական Կազմակերպություն**

Ֆինանսական հաշվետվություններ և

Անկախ աուդիտորի եզրակացություն

2017, 2018, 2019թթ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարիների վերաբերյալ

**Բովանդակություն**


| | |
|---|---|
| 3 | Անկախ աուդիտորի եզրակացություն |
| 6 | Հիմնադիրների ցանկ |
| 7 | Ֆինանսական արդյունքի և զուտ ակտիվի մասին հաշվետվություն |
| 8 | Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն |
| 9 | Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն |
| 10 | Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ |
| 11 | Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ |


---

| | |
|---|---|
| **Կազմակերպության գտնվելու վայրը՝** | Հայաստանի Հանրապետություն |
| **Իրավական ձևը՝** | Հասարակական Կազմակերպություն |
| **Հիմնական գործունեության նկարագիրը՝** | Միության գործունեության բնույթը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում |
| **Նախագահ՝** | Էմին Երիցյան |

«ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

ՀՀ, ք.Երևան 0025, Ա.Մանուկյան 5; հեռ՝ (374 95) 48 00 47;
globaudit@mail.ru; www.globaudit.am

# Անկախ աուդիտորի եզրակացություն

*«Հայաստանի Համայնքների Միություն» Հասարակական Կազմակերպության կառավարման մարմիններին*

**Կարծիք**

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանի Համայնքների Միություն» Հասարակական Կազմակերպության (այսուհետ՝ «Կազմակերպություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2017, 2018, 2019թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունները, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և զուտ ակտիվի, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Կազմակերպության ֆինանսական վիճակը 2017, 2018, 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Փոքր և Միջին Կազմակերպությունների Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

**Կարծիքի հիմք**

Մենք աուդիտն անցկացրեցրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն հաշվետվության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* պարբերությունում:
Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք),* և պահպանել ենք ՀԷՄՍԽ կանոններով նախատեսված էթիկայի այլ պահանջները: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքը հիմնավորելու համար:

**Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ների ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Կազմակերպությունը լուծարելու կամ Կազմակերպության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ ունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:
Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

**Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խարդախության կամ սխալի արդյունքում առաջացող խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- նույնականացնում և գնահատում ենք սխալի կամ խարդախության արդյունքում ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքը հիմնավորելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտմաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ողջ ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա եզրակացնում ենք, թե արդյոք տեղին է հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառումը ղեկավարության կողմից և թե արդյոք առկա է էական անորոշություն՝ Կազմակերպության անընդհատ գործելու կարողությունը նշանակալի կասկածի տակ դնող դեպքերի կամ պայմանների հետ կապված: Եթե գտնում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները համարժեք չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագայում տեղի ունեցող դեպքերը կամ ի հայտ եկող

հանգամանքները կարող են ստիպել կազմակերպությանը դադարեցնել անընդհատության սկզբունքի կիրառումը,

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների ու գործարքների ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, մենք հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Գլոբ Աուդիտ» ՍՊԸ

Տնօրեն

Աուդիտոր

13 օգոստոս, 2020թ.

ք. Երևան

## Հիմնադիրների ցանկ

Կազմակերպության հիմնադիրներ են հանդիսանում Հայաստանի Հանրապետության 502 /հինգ հարյուր երկու/ համայնքներ:

| | Ծնթ. | 2019թ. հազար դրամ | 2018թ. հազար դրամ | 2017թ. հազար դրամ |
|---|---|---|---|---|
| Շնորհներից, անդամավճարներից եկամուտ | 3 | 44,491 | 71,087 | 75,978 |
| Այլ եկամուտներ | 3 | 45 | - | - |
| Վարչական ծախսեր | 4 | (50,409) | (70,138) | (59,189) |
| Իրացման ծախսեր | | (55) | (28) | (26) |
| Այլ ծախսեր | | (42) | (130) | - |
| **Գործառնական հավելուրդ/(պակասուրդ)** | | **(5,970)** | **791** | **16,763** |
| Այլ օգուտ/(կորուստ), զուտ | | - | - | (1,000) |
| **Հավելուրդ մինչև հարկումը** | | **(5,970)** | **791** | **15,763** |
| Շահութահարկի գծով ծախս | 5 | - | - | - |
| **Տարվա զուտ հավելուրդ** | | **(5,970)** | **791** | **15,763** |
| Կուտակված հավելուրդ տարեսկզբի դրությամբ | | (1,701) | (2,492) | (16,891) |
| Տեղափոխում կուտակված շահույթ/(վնաս) | | - | - | (1,364) |
| **Կուտակված հավելուրդ տարեվերջի դրությամբ** | | **(7,671)** | **(1,701)** | **(2,492)** |

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2020թ. մայիսի 29-ին:

Էմին Երիցյան
Նախագահ

Թաքս Ընթանթինգ ՍՊԸ
Գլխավոր հաշվապահ

| | Ծնթ. | 2019թ. հազար դրամ | 2018թ. հազար դրամ | 2017թ. հազար դրամ |
|---|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | | |
| **Ընթացիկ ակտիվներ** | | **240** | **3,712** | **937** |
| Դրամական միջոցներ | 6 | 240 | 3,696 | 210 |
| Այլ ընթացիկ ակտիվներ | | - | 16 | 727 |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | **80** | **213** | **-** |
| Հիմնական միջոցներ | | 80 | 213 | - |
| **Ընդամենը ակտիվներ** | | **320** | **3,925** | **937** |
| **Պարտավորություններ** | | | | |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | **5,181** | **5,626** | **2,709** |
| Կրեդիտորական պարտքեր | | 4,141 | 2,638 | 1,864 |
| Ընթացիկ հարկային պարտավորություններ | | 1,040 | 2,988 | 845 |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | **2,810** | **-** | **720** |
| Փոխառություններ | 7.1 | 2,810 | - | 720 |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **7,991** | **5,626** | **3,429** |
| **Սեփական միջոցներ** | | | | |
| Կուտակված հավելուրդ | | (7,671) | (1,701) | (2,492) |
| **Ընդամենը սեփական միջոցներ** | | **(7,671)** | **(1,701)** | **(2,492)** |

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2020թ. մայիսի 29-ին:

Էմին Երիցյան
Նախագահ

Թաքս Ըքաունթինգ ՍՊԸ
Գլխավոր հաշվապահ

| | 2019թ. հազար դրամ | 2018թ. հազար դրամ | 2017թ. հազար դրամ |
|---|---|---|---|
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | **(6,263)** | **4,206** | **8,033** |
| Ստացված շնորհներ | 22,545 | 51,757 | 56,523 |
| Անդամակցության վճարներ | 21,946 | 19,330 | 18,662 |
| Գործառնական այլ | 58 | 518 | 11 |
| Գործուղման ծախսեր | (1,265) | (14,906) | (20,671) |
| Անդամակցության վճարներ | (591) | - | - |
| Վարձակալության գումարներ | (2,865) | (3,454) | (1,867) |
| Մատակարարներին վճարված գումարներ | (4,562) | (7,450) | (19,626) |
| Աշխատակիցներին տրված վճարներ | (27,778) | (30,689) | (18,997) |
| Բանկային միջնորդավճարներ | (51) | (12) | (60) |
| Վճարված հարկեր | (13,661) | (10,888) | (5,898) |
| Այլ վճարներ | (39) | - | (44) |
| **Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | **2,810** | **(720)** | **(9,650)** |
| Փոխառություններից մուտքեր | 9,275 | 4,200 | 5,900 |
| Փոխառություններից ելքեր | (6,465) | (4,920) | (14,550) |
| Տրված նվիրատվություն | - | - | (1,000) |
| **Դրամական միջոցների զուտ աճ** | **(3,453)** | **3,486** | **(1,617)** |
| **Փոխարժեքային տարբերություններ** | **(3)** | - | - |
| **Տարեսկզբի դրությամբ դրամական միջոցներ** | **3,696** | **210** | **1,827** |
| **Տարեվերջի դրությամբ դրամական միջոցներ** | **240** | **3,696** | **210** |

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2020թ. մայիսի 29-ին:

Էմին Երիցյան
Նախագահ

Թաքս Քքաունթինգ ՍՊԸ
Գլխավոր հաշվապահ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ..... 11
2 ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ ..... 12
3 ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ..... 15
4 ԾԱԽՍԵՐ ..... 15
5 ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ ..... 15
6 ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ..... 15
7 ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ ..... 166
8 ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 166

## 1 Կազմակերպության մասին

«Հայաստանի Համայնքների Միություն» Հասարակական Կազմակերպությունը (Կազմակերպություն) հիմնադրվել է «Հայաստանի Համայնքների Միություն» Իրավաբանական Անձանց Միության (211.150.05154, գրանցված 07.09.2009թ.-ին, ՀՎՀՀ 03534085) ՀՀ օրենսդրության համաձայն վերակազմավորման արդյունքում և հանդիսանում է դրա իրավահաջորդը:

Կազմակերպության կանոնադրությունը գրանցվել է ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում 01.02.2019թ., գրանցման թիվ՝ 211.171.1056247, իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ)՝ 39339430, ՀՎՀՀ 03534085:

Կազմակերպությանի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Աբովյան, Աբովյանի քաղաքապետարան, Բարեկամության հրապարակ 1:

Կազմակերպությանի գործունեության հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0025, ք. Երևան, Չարենցի 1, 201 սենյակ:

Կազմակերպության կառավարման մարմիններն են.

- ✓ Անդամների ընդհանուր ժողովը,
- ✓ Հանրապետական խորհուրդը,
- ✓ Վարչությունը,
- ✓ Նախագահը,
- ✓ Գործադիր տնօրենը:

Կազմակերպության ֆինանսական գործունեության և գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Վերստուգիչ հանձնաժողովի կողմից, որն ունի չորս անդամ, ովքեր ընտրվում են Ընդհանուր ժողովի կողմից՝ հինգ տարի ժամկետով:

Կազմակերպության աշխատակիցների միջին թվաքանակը 2019թ. կազմել է 7/յոթ/ մարդ, որից 2 /երկու/ մարդ հիմնական աշխատող (2018թ.՝ 9 մարդ, որից 5-ը հիմնական աշխատող, 2017թ.՝ 7 մարդ, որից 6-ը հիմնական աշխատող):

Կազմակերպության անդամների միջին թվաքանակը 2019թ. կազմել է 502 համայնք (2018թ.՝ 502 համայնք, 2017թ.՝ 502 համայնք):

### Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական իրադարձությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի բարեփոխումները բերեցին կայուն աճի տեմեպերին 2018-2019թթ.-ին: Տնտեսության մեջ առանցքային դեր ունեցան առևտրի, ծառայությունների և արդյունաբերության ոլորտները:

Կազմակերպության ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Կազմակերպության տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

### 1.1 Հիմնական գործունեությունը

Կազմակերպության գործունեության նպատակներն են.

- իրականացնել շահերի պաշտպանության և լոբբիստական գործունեություն;
- կազմակերպել հանդիպումներ, հանրագումարներ, համաժողովներ, սեմինարներ, ցուցադրություններ, տոնավաճառներ և այլ միջոցառումներ;
- կազմակերպել փորձի փոխանակման, վերապատրաստման և կարողությունների զարգացման միջոցառումներ, տրամադրել խորհրդատվական ծառայություններ;
- ձևավորել հանձնաժողովներ, աշխատանքային խմբեր և այլ աշխատանքային մարմիններ իր քաղաքականությունների մշակման, այդ թվում օրենքների և իրավական ակտերի վերաբերյալ միասնական դիրքորոշում մշակելու նպատակով;
- հաղորդակցության առկա համապատասխան միջոցներով՝ ներառյալ տպագիր և էլեկտրոնային հրատարակությունների, կայքէջի, զանգվածային լրատվամիձոցների և սոցիալական ցանցերի միջոցով կապ պահել անդամների և հանրության հետ;
- համագործակցել այլ երկրների տեղական ինքնակառավարման մարմինների, տեղական իշխանությունների ասոցիացիսաների և միջազգային կազմակերպությունների հետ, անդամագրվել տեղական և միջազգային կազմակերպությունների և մասնակցել դրանց աշխատանքներին;
- խթանել Հայաստանի տեղական ինքնակառավարման մարմինների տարածքային մարմինների և հարևան երկրների միջև միջսահմանային համագործակցությունը՝ երկկողմ և բազմակողմ հարաբերություններ ապահովելով հարևան պետությունների ՏԻՄ-երի և դրանց ասոցիաիցիաների հետ:

## 2. Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են ներքո: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Կազմակերպությանի գործառնական արժույթը:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՀՄՍԽ):

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Փոքր և Միջին Կազմակերպությունների Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտի (այսուհետ՝ ՓՄԿ-ների ՖՀՄՍ) պահանջներին համապատասխան:

***Չափման հիմքերը***
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա:

***Անընդհատության սկզբունք***
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:

***Դատողությունների, գնահատումների և ենթադրությունների օգտագործում***
Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն պատրաստելու համար Կազմակերպությանի ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների և ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

***Գործարքներ արտարժույթով***
Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված տվյալ օրվա միջին փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ.
ա) արտարժույթով դրամային հոդվածները ներկայացվում են (վերահաշվարկվում են)՝ կիրառելով փակման (հաշվետու ամսաթվի) փոխարժեքը,
բ) արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները, որոնք հաշվառվում են սկզբնական արժեքով, ներկայացվում են գործարքի օրվա փոխարժեքով:
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտը կամ վնասը, որոնք առաջանում են արտարժույթով գործարքների մարման կամ հաշվետու ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով դրամային հոդվածների վերագնահատման արդյունքում, ճանաչվում են ֆինանսական արդյունքում:
Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Կազմակերպության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Կազմակերպության գործարքների տնտեսական բովանդակությունը:
Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է հազար միավոր:

***Ֆինանսական գործիքներ***
Կազմակերպությունում առկա են հետևյալ ոչ ածանցյալ ֆինանսական գործիքները.
- կրեդիտորական պարտքեր,
- ստացված փոխառություններ,
- դրամական միջոցներ և համարժեքներ:

Դրամական միջոցները կազմված են ընթացիկ հաշիվների մնացորդներից:
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Կազմակերպությունը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

***Պետական շնորհներ***

Կազմակերպությանը որպես շնորհ հաշվառում է հիմնադիրներից, տեղական և միջազգային կազմակերպություններից ստացված միջոցները, որոնք ճանաչվում և չափվում են իրական արժեքով: Շնորհները ճանաչվում են որպես եկամուտ սիստեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջաններում, որոնց ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար ստացվել են այդ շնորհները:

***Գործառնական վարձակալություն***

Կազմակերպությունը չի ընտրել ՖՀՄՍ 16-ին անցման մեթոդը, քանի որ ղեկավարությունը գտնում է որ վարձակալական պայմանագրերը չեն վերագրվում ՖՀՄՍ 16-ի պահանջներին, ուստի բոլոր վարձակալությունները դիտվում են որպես գործառնական վարձակալություններ: Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում են որպես ծախս գծային հիմունքով: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության ծախսերը, ծախսագրվում են իրականացման պահին:

***Հատուցումներ աշխատակիցներին***

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

(գ) քաղաքացիաիրավական հիմունքներով վճարված եկամուտները:

***Շահութահարկ***

Կազմակերպության հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ հարկից: Ընթացիկ հարկը ճանաչվում է որպես փոխհատուցում կամ ծախս և ներառվում է տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ:

## 3 Եկամուտներ

| | 2019թ. հազար դրամ | 2018թ. հազար դրամ | 2017թ. հազար դրամ |
|---|---|---|---|
| Եկամուտներին վերաբերող շնորհներից | 22,545 | 51,757 | 56,523 |
| Անդամավճարներից | 21,946 | 19,330 | 18,662 |
| Ակտիվներին վերաբերվող շնորհներից | - | - | 793 |
| Վերապատրաստումից | 45 | - | - |
| | **44,536** | **71,087** | **75,978** |

Ստացված շնորհները իրենցից ներկայացնում են միջազգային գործընկերներից, ինչպես նաև ՀՀ կազմակերպություններից ստացված շնորհները, որոնք օգտագործվում են համապատասխան ծրագրային ծախսերը կատարելու համար /մասնավորապես՝ աշխատավարձ, գործուղման վճարներ, մատակարարներին վճարներ, վարձակալության վճարներ և այլն/:

## 4 Ծախսեր

| | 2019թ. հազար դրամ | 2018թ. հազար դրամ | 2017թ. հազար դրամ |
|---|---|---|---|
| Աշխատանքի վճարման ծախսեր | 40,751 | 45,169 | 25,432 |
| Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | 2,290 | 17,277 | 25,772 |
| Կոմունալ և գրասենյակային ծախսեր | 529 | 800 | 530 |
| Աուդիտորական և խորհրդատվական | 960 | 600 | 600 |
| Մաշվածություն, վերանորոգման ծախսեր | 334 | 668 | 881 |
| Չփոխհատուցվող հարկեր | 222 | 193 | 85 |
| Փոստի և հեռահաղորդակցության | 1,739 | 1,535 | 3,062 |
| Վարձակալական վճարներ | 2,122 | 2,100 | 2,312 |
| Բանկային և ապահովագրական ծառայություններ | 51 | 12 | 60 |
| Վարչական այլ ծախսեր | 1,411 | 1,784 | 455 |
| | **50,409** | **70,138** | **59,189** |

## 5 Շահութահարկ

Կազմակերպությունը հաշվետու ժամանակահատվածում շահույթ չի ունեցել:

## 6 Դրամական միջոցներ

| | 2019թ. հազար դրամ | 2018թ. հազար դրամ | 2017թ. հազար դրամ |
|---|---|---|---|
| Հաշվարկային հաշվում (դրամ) | 237 | 3,696 | 210 |
| Հաշվարկային հաշվում (դոլար, եվրո) | 3 | - | - |
| | **240** | **3,696** | **210** |

## 7 Գործարքներ կապակցված կողմերի հետ

### *7.1 Առևտրային գործարքներ*

Կազմակերպության նախագահ Էմին Երիցյանից համաձայն 20.01.2017թվականին կնքված թիվ 01 փոխառության պայմանագրի 2019թվականին ստացվել է 8,900հազար դրամի փոխառություն, որը մարվել է մասնակիորեն 6,090հազար դրամի չափով: 31.12.2019թ դրությամբ պարտքի մնացորդը կազմում 2,810հազար դրամ:

### *7.2 Աշխատավարձ և այլ հատուցումներ*

| | 2019թ. հազար դրամ | 2018թ. հազար դրամ |
|---|---|---|
| Ղեկավար անձնակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդ | 21,812 | 23,949 |
| | **21,812** | **23,949** |

Հիմնական ղեկավար անձնակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդը 2019թ կազմել է 21 812 հազար ՀՀ դրամ, որից 8 639 հազար ՀՀ դրամը որպես հիմնական աշխատավարձ, իսկ 13 173 հազար ՀՀ դրամը որպես ծրագրերի իրականացման գծով աշխատավարձ (2018թ կազմել է 23 949 հազար ՀՀ դրամ, որից 9 043 հազար ՀՀ դրամը որպես հիմնական աշխատավարձ, իսկ 14 905 հազար ՀՀ դրամը որպես ծրագրերի իրականացման գծով աշխատավարձ, 2017թ կազմել է 17 618 հազար ՀՀ դրամ, որից 9 699 հազար ՀՀ դրամը որպես հիմնական աշխատավարձ, իսկ 7 919 հազար ՀՀ դրամը որպես ծրագրերի իրականացման գծով աշխատավարձ):

## 8 Պայմանական պարտավորություններ

- 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների աուդիտի եզրակացության օրվա դրությամբ Կազմակերպության նկատմամբ առկա չեն որևէ դատական հայցեր: Միևնույն ժամանակ Կազմակերպությունը վերոնշյալ ամսաթվերի դրությամբ չունի որևէ դատական հայց ընդդեմ երրորդ կողմի:
- Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

  Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2020թ. մայիսի 29-ին:

Էմին Երիցյան
Նախագահ

Թաքս Ընդունող ՍՊԸ
Գլխավոր հաշվապահ